Կայուն զարգացում

Սույնով «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն հայտնում է իր հանձնառությունը շարունակաբար բարելավելու իր գործունեության ցուցանիշները՝ պարբերաբար նվազեցնելով իր գործունեության արդյունքում առաջացած ցանկացած տեսակի բնապահպանական և սոցիալական բացասական ազդեցություններ:

Ընկերությունը գիտակցում է հեռահաղորդակցության և կապի ոլորտի առաջատարի բնապահպանական և սոցիալական պատասխանատվության ազդեցությունը և նպատակադրվում է նվազեցնել իր ածխածնային հետքն ու զարգանալ կայուն ճանապարհով:

Ընկերությունը գիտակցում է, որ ցանկացած տեսակի տնտեսական գործունեություն ունի իր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ուստի մշակում և ներդնում է շրջակա միջավայրի վրա իր ազդեցությունը նվազեցնելու միջոցառումներ, որը, ի թիվս այլ ծրագրերի, ներառում է հետևյալ գործողությունները՝

- Էներգիայի սպառման կրճատում և էներգարդյունավետ տեխնոլոգիաների կիրառում,
- Ռեսուրսների շրջանաձև համակարգի ներդրում գործունեության բոլոր ոլորտներում, ներառյալ թափոնների կառավարումը,
- Աղտոտման կանխարգելում և բնապահպանական ռիսկերի կառավարում,
- Համագործակցություն բնապահպանական և սոցիալական բարձր ստանդարտներին հետևող գործընկերների հետ,
- Էկոլոգիապես կայուն, բնությանը չվնասող և վստահելի աղբյուրներից ստացված արտադրանքի/ապրանքի ձեռքբերում,
- Արտակարգ իրավիճակների և տեխնածին վթարների կանխարգելում՝ Ընկերության աշխատակիցներին, հաճախորդներին և շրջակա միջավայրը պաշտպանելու գործընթացների ներդրմամբ,
- Ընկերության անձնակազմի շարունակական վերապատրաստում ESMS համակարգի և այն Ընկերության

ընդհանուր կառավարման համակարգում ներդնելու եղանակների վերաբերյալ,

- Ընկերության ողջ անձնակազմի, համայնքների և հանրության անվտանգության ու առողջության ապահովում իրենց աշխատանքի և Ընկերության հետ փոխգործակցության ողջ ընթացքում,
- Բոլոր տեսակի խտրականության ձևերի, հարկադրված կամ անչափահասների աշխատանքի տեսակների կանխարգելում, գենդերային հավասարության խթանում և կոռուպցիայի բոլոր ձևերի արգելում,
- Վերոնշյալ բոլոր պարտավորությունների կատարման մշտադիտարկում և համակարգի անընդհատ կատարելագործում՝ բնապահպանական և սոցիալական բարձր ստանդարտների տեղայնացումն ապահովելու համար,
- Կայուն զարգացում և բնապահպանական ու սոցիալական բարձր ստանդարտների պահպանում։

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
Բոլոր իրավունքները պաշտպանված են